ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 181/31-Լ «25» 09 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի իրավաբանական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանման աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանը հրապարակել ԵՊՀ պաշտոնական կայքում:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի
2025 թ. 25.09 ի, 181/31-հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) Իրավաբանական լաբորատորիայի (այսուհետ՝ Լաբորատորիա) գործունեության և աշխատանքի կազմակերպման կարգը:

2. Լաբորատորիայի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ «Իրավաբանական լաբորատորիա»,
ռուսերեն՝ «Юридическая лаборатория»,
անգլերեն՝ «Legal Laboratory»:

3. Լաբորատորիայի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Վազգեն Սարգսյան փողոց 5 (ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքում Լաբորատորիայի համար նախատեսված աշխատանքային տարածքը):

4. Լաբորատորիան սահմանված կարգով կարող է ունենալ իր անվանմամբ դրոշմակնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն), պաշտոնաթուղթ, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

5. Լաբորատորիան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատակարգով, ԵՊՀ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, ՀՀ գլխավոր դատախազության և «Հայ իրավաբանական միություն» կազմակերպության (այսուհետ միասին՝ նաև «Կողմեր») միջև 2024 թվականի օգոստոսի 28-ին կնքված մտադրությունների վերաբերյալ հայտարարությամբ (այսուհետ՝ Եռակողմ հայտարարություն) և այլ իրավական ակտերով:

6. Լաբորատորիայի շահառուներն են ԵՊՀ ուսանողները, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված՝ փորձաշրջան անցնող անձինք, գործող դատախազները (այսուհետ միասին՝ նաև «շահառուներ»):

7. Լաբորատորիայում ուսումնական և մասնագիտական պրակտիկայի կազմակերպման հարաբերությունների վրա ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման համապատասխան կարգը և ՀՀ դատախազությունում մասնագիտական պրակտիկա անցնելու կարգը տարածվում են *mutatis mutandis*, ընդ որում՝

1) ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման կարգը և Հայաստանի Հանրապետության դատախազությունում մասնագիտական պրակտիկա անցնելու կարգը վերաբերելի մասերով տարածվում են Լաբորատորիայում ԵՊՀ ուսանողների պրակտիկայի հետ կապված հարաբերությունների վրա,

2) Հայաստանի Հանրապետության դատախազությունում մասնագիտական պրակտիկա անցնելու կարգը վերաբերելի մասով տարածվում է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված՝ փորձաշրջան անցնող անձանց՝ Լաբորատորիայում փորձաշրջանի կազմակերպման հետ կապված հարաբերությունների վրա:

2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Լաբորատորիայի նպատակներն են՝

1) ոչ ֆորմալ կրթության միջոցով արդիականացնել և կատարելագործել Լաբորատորիայում պրակտիկա անցնող ԵՊՀ ուսանողների իրավաբանական և այլ հարակից ոլորտներում (կիբեռհանցագործությունների դեմ պայքար, հանրային շահերի պաշտպանություն և այլն) գիտելիքները և գործնական հմտությունները,

2) նպաստել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված՝ փորձաշրջան անցնող անձանց, գործող դատախազների իրավաբանական և այլ հարակից ոլորտներում գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործմանն ու ամրապնդմանը,

3) ստեղծել նորարարական գիտակրթական հնարավորություններ և ռեսուրսներ իրավաբանական և այլ հարակից ոլորտներում կրթության և գիտական հետազոտությունների կազմակերպման և իրականացման համար,

4) ստեղծել աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնագիտական բազա և փորձարարական ռեսուրսներով հարուստ միջավայր:

9. Լաբորատորիայի գործառույթներն են՝

1) արդիական թեմատիկ ուղղություններով (կիբեռհանցագործությունների դեմ պայքար, հանրային շահերի պաշտպանություն և այլն) ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպումն ու իրականացումը, ինչպես նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված՝ փորձաշրջան անցնող անձանց և գործող դատախազների ոչ ֆորմալ ad hoc վերապատրաստումների կազմակերպումն ու իրականացումը,

2) Լաբորատորիայում քննարկումների, դասախոսությունների, բանավեճերի, դատախաղերի, գործնական աշխատանքների, սեմինարների, գիտաժողովների և այլ արդի գիտակրթական և գործնական միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը,

3) Լաբորատորիայում մասնագիտական հետազոտական աշխատանքների, նախագծերի և ծրագրերի իրականացումը՝ համագործակցելով տեղական և միջազգային կրթական հաստատությունների և մասնագիտական կազմակերպությունների հետ,

4) փոխադարձ այցելությունների կազմակերպումը, ներառելով, բայց չսահմանափակվելով Հայաստանի Հանրապետության դատախազությունում ՀՀ Սփյուռքի իրավաբան ուսանողների պրակտիկայի կազմակերպմամբ,

5) պարբերաբար թարմացվող մասնագիտական գրականության ապահովումը, գիտական, մասնագիտական գրականության, վերլուծական, տեղեկատվական հրապարակումների, մեթոդական և գործնական ուղեցույցների և այլ նյութերի պատրաստումն ու փոխանակումը,

6) Լաբորատորիայում իրականացված մասնագիտական հետազոտությունների արդյունքների ամրագրումը, տարածումը, օգտագործումն ու քննարկումը ներպետական և միջազգային համապատասխան հարթակներում,

7) Լաբորատորիայում ստեղծված արդյունքների ինտեգրումն ու դրանց նպատակային օգտագործումը ՀՀ գլխավոր դատախազության գործունեության ոլորտներում:

10. Լաբորատորիան կարող է անդամակցել ու մասնակցել գիտական, ինչպես նաև Լաբորատորիայի գործունեության ուղղություններով գործունեություն իրականացնող մասնագիտական ընկերությունների ու միությունների:

3. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

11. Լաբորատորիան ղեկավարում է Լաբորատորիայի տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը՝ ՀՀ գլխավոր դատախազի համաձայնությամբ:

12. Լաբորատորիայում գործում է խորհրդատուների խորհուրդ (այսուհետ՝ «Խորհուրդ»), որի նպատակն է Եռակողմ հայտարարության ուղղություններով Լաբորատորիայի գործունեության կազմակերպումը:

13. Խորհուրդը ձևավորվում է Եռակողմ հայտարարության Կողմերի ներկայացուցիչներից: Խորհրդի նախագահն ի պաշտոնե ԵՊՀ ռեկտորն է: Խորհրդի անվանական կազմը հաստատում է ԵՊՀ ռեկտորը՝ ՀՀ գլխավոր դատախազի համաձայնությամբ:

14. Լաբորատորիայի տնօրենը յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա մեկնարկին հաջորդ տարվա գործողությունների ծրագրի նախագիծը, իսկ ֆինանսական տարվա ավարտին, հաջորդ տարվա ծախսերի նախահաշվի նախագիծը ներկայացնում է Խորհրդին՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար: Խորհրդի խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո դրանք ներկայացվում են ԵՊՀ ռեկտորին:

15. Լաբորատորիայի տնօրենն առնվազն տարեկան մեկ անգամ Խորհրդին է ներկայացնում հաշվետու ժամանակաշրջանում ստացված արդյունքների, իրականացված ծախսերի ու ֆինանսական արդյունքների մասին հաղորդում:

16. Լաբորատորիայի տնօրենը՝

1) կազմակերպում և վերահսկում է Լաբորատորիայի ընթացիկ գործունեությունը, ապահովում է հիմնական գործառույթների իրականացումը,

2) առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին Լաբորատորիայի գործունեության նոր թեմատիկ ուղղություններ սահմանելու, կառուցվածքային ենթաստորաբաժանումներ կամ աշխատանքային խմբեր ստեղծելու վերաբերյալ,

3) կատարում է աշխատանքի բաժանում Լաբորատորիայի աշխատողների միջև, նրանց տալիս համատասխան ցուցումներ և հանձնարարականներ,

4) ապահովում է պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ Լաբորատորիայի համագործակցությունը, ներկայացնում է Լաբորատորիան երրորդ անձանց հետ հարաբերություններում, Լաբորատորիայի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

5) պատասխանատվություն է կրում Լաբորատորիայի կողմից իրականացվող աշխատանքների որակի ու խնդիրների պատշաճ ու արդյունավետ լուծման համար,

6) իրականացնում է սույն աշխատակարգից, աշխատանքային պայմանագրից, պաշտոնի անձնագրից բխող և Լաբորատորիայի գործունեությանն առնչվող այլ գործառույթներ,

7) ստորագրում է Լաբորատորիայի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ, նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ, այլ գրություններ ու փաստաթղթեր:

17. Լաբորատորիայի աշխատողների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով (աշխատանքային նկարագրով), ԵՊՀ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև ծագում են Կողմերի հանձնարարականներով:

18. Լաբորատորիայում կարող են ստեղծվել նաև կառուցվածքային ենթաստորաբաժանումներ կամ աշխատանքային խմբեր:

4. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

19. Լաբորատորիայի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

1) Լաբորատորիային Կողմերի հանձնած գույքն ու դրամական միջոցները,

2) ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցները,

3) այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց կատարած նվիրատվությունները, անհատույց հանձնված գույքը, դրամաշնորհները,

4) Լաբորատորիային թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20. Լաբորատորիան ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է ԵՊՀ կանոնադրությամբ սահմանված կարգով: